
**ԻՐԱՎԱՊԱՅ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԻՆՏԵԼԵԿՏԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ԿԱՊԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՂԱՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հանցավորության այսօրվա մակարդակը, կառուցվածքը և դինամիկան իրական վտանգ են ներկայացնում քաղաքացիների՝ օրենքով պահպանվող իրավունքների և ազատությունների, ինչպես նաև հասարակության և պետության շահերի համար: Ուժեղանում են հանցավորության կազմակերպվածությունը և ագրեսիվությունը, տեղի է ունենում բռնի և շահադիտական հանցավորությունների միաձուլում: Տարածում են ստանում, մասնավորապես, այնպիսի վտանգավոր հանցատեսակներ, ինչպիսիք են պատվերով սպանությունները, մարդկանց առևտուրը, թմրաբիզնեսը և զենքի անօրինական շրջանառությունը:

Համաձայն հանցավորության վերաբերյալ ՀՀ դատախազության վիճակագրական տվյալների՝ 2008-2009 թվականներին հանցագործությունների ընդհանուր քանակը աճել է 54,7%-ով¹: Իրավակարգի այսպիսի վիճակը թելադրում է ուժեղացնել իրավապահ մարմինների պայքարը հանցավորության դեմ, խորացնել աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը, կատարելագործել պայքարի միջոցներն ու մեթոդները:

Իրավապահայան գործունեության խնդիրների հաջող լուծումը ուղղակիորեն պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական և, իհարկե, մարդկային: Իրավապահ մարմինների աշխատակիցների (այսուհետ՝ աշխատակից) համար հատկապես մարդկային գործոնը կարևոր նշանակություն է ձեռք բերում, քանի որ նրանք իրենց ամենօրյա աշխատանքի ընթացքում գործ ունեն մարդկանց հետ: Փորձը ցույց է տալիս, որ իրավապահ մարմինների պրակտիկայում անձի հոգեկան օրինաչափությունների իմացությունը, որոշակի հոգեբանական մեթոդների կիրառումը հեշտացնում են այդ մարմինների ներկայացուցիչների գործունեությունը: Միևնույն ժամանակ հաղորդակցման գործընթացի գրագետ կառուցումը և համագործակցելու կարողությունը, մարդկանց վարքի ճանաչումը և կանխատեսումը, իրավապահայան գործունեության արդյունավետ կատարման անհրաժեշտ պայմանն է:

Իրավապահայան գործունեության յուրահատկություններից մեկն այն է, որ յուրաքանչյուր աշխատակից գործի բերումով ընկղմված է գրուցակցի էքսպրեսիվ վարքի և հոգեբանական բնութագրերի հակասական կապերով աշխարհի մեջ: Ինչպես նշում է Ա. Բողալյովը, «Շփումներում դրական արդյունքների հասնելը, որպես կանոն, պայմանավորված է միմյանց հետ

¹ Տե՛ս <http://www.genproc.am/upload/File/2009tarekan.pdf>

շփվող սուբյեկտների զգայական համարժեք արտացոլման, միմյանց մասին տեղեկության կուտակմամբ և ճիշտ ամփոփմամբ»²:

Այս բնագավառի աշխատակիցը իր գործունեության ընթացքում մշտապես պետք է ցուցադրի անձնային և արհեստավարժ գործողությունների որոշակի մակարդակ, որը կապահովի նրա գործունեության բարձր արդյունավետությունը: Այս հարցում մեծ է սոցիալական կարողությունների դերը:

Յոգեբանությանը նվիրված մասնագիտական գրականության մեջ սոցիալական կարողությունները բնութագրվում են որպես բարդ կառուցվածքային գոյացություն, որը բաղկացած է մի շարք ունակություններից՝

- սոցիալ-պերցեպտիվ իրազեկություն,
- սոցիալական ինտելեկտ,
- սոցիալական երևակայություն,
- սոցիալ-հոգեբանական դիտողականություն,
- սոցիալական ընկալման կարողություններ և հմտություններ:

Վ. Լաբունսկայան գտնում է, որ անձի կառուցվածքում սոցիալական ընկալման կարողությունները գրավում են առաջին տեղերից մեկը: Դրանք սոցիալ-հոգեբանական բարդ գոյացություններ են, որոնք ձևավորվում են մարդկանց փոխգործունեության հետևանքով և ապահովում են մարդու հոգեկան վիճակների, հատկությունների, վերաբերմունքի և փոխհարաբերությունների համապատասխան արտացոլումը³:

Սոցիալական կարողությունների հիմնախնդրի արդիականությունն այսօր մեծապես պայմանավորված է իրավապահ մարմինների աշխատակիցների սոցիալական ընկալման կարողությունների և սոցիալական ինտելեկտի առանձնահատկությունների փոխկապվածության խնդրի լուծումով:

Անձի սոցիալական կարողությունների հանդեպ մասնագետների հետաքրքրությունների ակտիվացման պատճառներից մեկն այն փաստի բացահայտումն է, որ անձի ճանաչողական ոլորտի զարգացման օրինաչափությունները չեն համընկնում նրա՝ որպես շփման փոխգործակցության պրակտիկայի և ճանաչման սուբյեկտի ձևավորման հետ:

Դեռևս անցյալ դարի 60-ական թթ. կեսերին Մ. Օ'Սալիվանի, Ջ. Գիլֆորդի և Ռ. դը Միլի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գոյություն ունեն մի խումբ ունակություններ, որոնց զարգացումը կախված չէ «իրական ինտելեկտի» զարգացման մակարդակից⁴:

Յետաքրքրող անձանց հետ միջանձնային փոխհարաբերությունների կառուցման և կանոնակարգման, մարդկանց արարքների դրդապատճառների ճանաչման հարցում հատուկ տեղ է գրավում սոցիալական ինտելեկտը՝ ինտեգրալ ինտելեկտուալ կարողությունը, որը որոշում է շփման հաջողությունը և սոցիալական հարմարեցումը, ինչը միավորում և կանոնա-

² Бодалев А. А. Восприятие и понимание человека человеком. М., 1982, с. 6.

³ Стен Лабунская В. А. Экспрессия человека: общение и межличностное познание. Ростов-на-Дону, 1999, էջ 291:

⁴ Стен О'Sullivan, M., Guilford, J.P., & de Mille, R. (1965). The measurement of social intelligence. *Reports from the Psychological Laboratory, University of Southern California*, N. 34, էջ 5:

կարգում է սոցիալական օբյեկտների արտացոլմամբ պայմանավորված կոգնիտիվ (ինացական) գործընթացները:

Ինչպես նշում է Ե. Պաշենկոն, վերջին երկու տասնամյակներում հոգեբանական գիտությունը առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերել սոցիալական ինտելեկտի ուսումնասիրման հարցի նկատմամբ, որը պայմանավորում է սոցիալական ճանաչման, սոցիալական փոխազդեցության և սոցիալական հարմարեցման, ինչպես նաև ոչ խոսքային հակազդման հաջողությունը, հանդիսանալով «մարդ-մարդ» մասնագիտություններում մասնագիտական կարևոր հատկություն⁵: Այն հանդես է գալիս որպես անձի հաղորդակցական կարողությունների ինացական բաղադրիչ:

Սակայն, չնայած այն բանին, որ արդյունավետ միջանձնային հաղորդակցման հարցում սոցիալական ինտելեկտը ունի ակնհայտ կարևորություն, այնուամենայնիվ նրա կառուցվածքը, բովանդակությունը և բնույթը դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն, ինչը առաջացնում է գիտական ոչ միանշանակ պատկերացումներ այդ երևույթի մասին:

Սոցիալական ինտելեկտի էության մասին պատկերացումները մշակվել են վարքային (Է. Տորոնդայկ, Գ. Օլպորտ, Գ. Այզենկ, Մ. Խոլոդնայա) և ինացական (Ջ. Գիլֆորդ, Դ. Կիտինգ, Ն. Կուդրյավցևա, Դ. Ուշակով) մոտեցումների շրջանակներում: Սոցիալական ինտելեկտը, համաձայն Վ. Կունիցինայի, հանդես է գալիս որպես սոցիալական իրականության ճանաչման միջոց, իսկ սոցիալական իրազեկությունը՝ որպես այն ճանաչելու արդյունք⁶:

Ռուսաստանյան հոգեբանների շրջանում ձևավորված է այն կարծիքը, որ սոցիալ-պերցեպտիվ իրազեկությունը, սոցիալական ինտելեկտը կապված են շփման ոլորտում որոշակի դասի խնդիրների լուծման հետ: Ինչպես նշում է Դ. Ուշակովը, սոցիալական ինտելեկտի զարգացման մակարդակը կախված է մի շարք գործոններից, այդ թվում՝ մարդու անձնային առանձնահատկություններից և կյանքի ուղուց⁷:

Մեր հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են անձի բազմագործոն տեսությունները (Ռ. Կետել, Ջ. Գիլֆորդ), միջանձնային ճանաչման գործընթացում սոցիալական ընկալման մոտեցումները (Ա. Բոդայով, Վ. Պանֆյորով), մարդու էքսպրեսիայի բազմանշանակության և սոցիալական ինտելեկտի վերաբերյալ տեսակետները (Վ. Լաբունսկայա, Վ. Կունիցինա, Դ. Ուշակով):

Նշենք, որ սոցիալական ինտելեկտի չափման հնարավորությունը բխում է Գիլֆորդի մշակած ինտելեկտի կառուցվածքի մոդելից: Համաձայն դրա՝ սոցիալական ինտելեկտը ինտելեկտուալ կարողությունների համակարգ է, որը ոչ թե պայմանավորված է ընդհանուր ինտելեկտի գործոնով, այլ, առաջին հերթին, վարքային տեղեկատվության ճանաչումով, որոնք, ինչպես և ընդհանուր ինտելեկտուալ կարողությունները, կարելի է

⁵ Стен Пашенко Е. И. Социальный интеллект в структуре личностных и поведенческих характеристик // Ежегодник Российского психологического общества в 8 тт. Т. 6. СПб., 2003, էջ 277:

⁶ Стен Куницина В. Н. Межличностное общение. СПб., 2001, էջ 464:

⁷ Стен Ушаков Д. В. Социальный интеллект как вид интеллекта // Социальный интеллект: теория, измерение, исследования. М., 2004, էջ 25:

նկարագրել երեք փոփոխականների տիրույթում՝ բովանդակության, գործողությունների և արդյունքի⁸: Ջ. Գիլֆորդի հետազոտությունների կենտրոնը վարքի ճանաչումն է:

Գիլֆորդի թեստը բաղկացած է չորս ենթաթեստից⁹: Մենք կիրառել ենք դրանցից երկուսը՝ «պատմություններ ավարտով» և «էքսպրեսիայի խմբեր»: Առաջինը ուղղված է վարքի արդյունքների, իսկ երկրորդը՝ վարքի դասի ճանաչմանը:

Նշենք, որ վարքի արդյունքների ճանաչման թեստից բարձր տվյալներ ունեցող անձինք կարողանում են կանխատեսել ուրիշների վարքի հետևանքները: Նրանք շփման իրական իրավիճակների (ընտանեկան, գործնական, ընկերական) վերլուծության հիման վրա կարողանում են կռահել մարդկանց հետագա գործողությունները՝ հասկանալով նրանց մտքերը, զգացմունքները և մտադրությունները:

Վարքի դասի ճանաչման բարձր արդյունքների դեպքում՝ անձինք կարողանում են ճիշտ գնահատել մարդկանց հոգեվիճակները, զգացմունքները և մտադրությունները՝ հիմնվելով նրանց ոչ խոսքային դրսևորումների, դիմախաղի, կեցվածքի և ժեստերի վրա: Այդ կարգի մարդիկ ավելի մեծ տեղ են տալիս ոչ խոսքային հաղորդակցմանը՝ ուշադրություն դարձնելով զրուցակցի ոչ խոսքային հակազդումներին:

Մեր նպատակն է ուսումնասիրել սոցիալական ինտելեկտի և անձնային բնութագրիչների կապը: Ենթադրվում է, որ վարքի արդյունքները և վարքի դասի ճանաչման կարողություններից յուրաքանչյուրը պայմանավորված է անձնային որոշ բնութագրերով:

Աշխատակիցների անձնային հոգեբանական առանձնահատկությունները ուսումնասիրելու նպատակով օգտագործվել են անձի ուսումնասիրման Կետելի բազմագործոն մեթոդիկան (C ձև) և Գիլֆորդի «սոցիալական ինտելեկտ» մեթոդիկան:

Կետելի անձնային հարցարանը կիրառվել է աշխատակիցների հոգեբանական անձնային առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով: Գիլֆորդի և Օ'Սալիվանի սոցիալական ինտելեկտի չափման թեստը կիրառվել է սոցիալական ինտելեկտի, մասնավորապես վարքի արդյունքների և վարքի դասերի ճանաչման գործոնների առանձնահատկությունները պարզելու նպատակով:

Ստացված արդյունքները մշակվել են Մանա-Ուտնիի (**U**) ոչ պարամետրիկ չափորոշիչով: Վարկածի հաստատման համար իրականացվել է էմպիրիկ հետազոտություն, որին մասնակցել են 68 աշխատակից՝ 21-ից մինչև 31 տարեկան, բարձրագույն կրթությամբ, միջինը 2,5 տարվա աշխատանքային փորձով:

Հետազոտության ընթացակարգը: Նախ՝ պարզել ենք մասնակիցների սոցիալական ինտելեկտի զարգացման աստիճանը՝ ըստ վարքի արդյունքների և վարքի դասի ճանաչման: Պարզվել է, որ ենթաթեստերի

⁸ Տե՛ս Գիլֆորդ Ժ. Три стороны интеллекта. // «Психология мышления». М., 1965 // <http://www.intelligence.su/lib/00018.htm>

⁹ Տե՛ս Շալաևա Թ. Ի. Использование методики исследования социального интеллекта в профконсультировании. Методическое пособие // http://window.edu.ru/window/catalog/pdf2txt?p_id=24612

արդյունքների միջև կոռելյացիոն կապը ունի հակադարձ համեմատական բնույթ ($r = -0.162$), բայց այն նշանակալի չէ: Գտնում ենք, որ նշված տարբերությունը պայմանավորված է հետազոտվողների վարքի դասի և արդյունքների ճանաչման կարողությունների տարաբնույթ լինելու հանգամանքով:

Ըստ հետազոտության խնդիրների՝ թեստերի տվյալների համադրմամբ մասնակիցներին բաժանել ենք 8 խմբերի (տե՛ս աղյուսակ 1):

Հետազոտվողների բաշխվածությունը խմբերում

Աղյուսակ 1

| | | Վարքի դասի ճանաչման կարողություն | | |
|---|-------|----------------------------------|--------------------|-------------------|
| | | Ցածր | Միջին | Բարձր |
| Վարքի արդյունքների ճանաչման ցուցանիշի վերաբերյալ կարողություն | Ցածր | 8 - թղ խումբ 3 | 5 - թղ խումբ 14 | 1 - ն խումբ 3 |
| | Միջին | 4 - թղ խումբ 9 | 7 - թղ խումբ 27 | 6 - թղ խումբ 6 |
| | Բարձր | 2 - թղ խումբ 3 | 3 - թղ խումբ 3 | 9 - թղ խումբ 0 |


Այնուհետև, նշված խմբերում կիրառել ենք Կետելի անձնային թեստը¹⁰ և ստացված արդյունքների հիման վրա կազմել մասնակիցների անձնային պրոֆիլները: Պրոֆիլների միջխմբային համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնակիցներին հիմնականում հատուկ են պատասխանատվության զգացումը (G), կասկածամտությունը (L), ինքնատիրապետումը, ցանկությունների, սեփական հույզերի և վարքի հսկումը (Q3) (տե՛ս գծանկար 2):

Արդյունքների հետագա մշակումը (Մանա-Ուտմիի չափորոշիչի միջոցով) ցույց է տվել, որ C (հուզական անկայունություն – հուզական կայունություն բարձր), E (հնազանդություն – իշխելու հակում), F (զսպվածություն – խանդավառություն), H (երկչոտություն – քաջություն), I (խստություն – փափկասրտություն), N (ուղղամտություն – դիվանագիտություն), O (վստահություն սեփական անձի նկատմամբ – տագնապայնություն, անվստահություն), Q2 (կախվածություն խմբից – ինքնուրույնություն) գործոնների պարագայում խմբերի միջև նշանակալի տարբերություններ չկան:

¹⁰ Կետելի երկրորդային գործոնները հաշվարկվել են Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի հոգեբանության ֆակուլտետի հոգեֆիզիոլոգիայի ուսումնական լաբորատորիայի կայքում զետեղված բանաձևերի համաձայն (տե՛ս <http://pfmethod.narod.ru/Praktikum/16pf.htm>)

Կետելի անձնային հարցարանի արդյունքների հիման վրա կազմված պրոֆիլները

Գձանկար 2




Մնացած գործոնների ուսումնասիրությունից (A, B, M, Q1, Q4) ակնհայտ է դառնում, որ դրանք, ըստ խմբերում իրենց դրսևորելու առանձնահատկությունների, կարող են առանձնացվել զույգ խմբերի, մասնավորապես՝ 1-ին ու 4-րդ և 2-րդ ու 3-րդ (տես գծանկար 3):

Արդյունքների մշակումը ցույց է տալիս, որ A (ինքնամփոփություն, ծածկանտություն – մարդամոտություն, բարություն) գործոնի պարագայում բոլոր խմբերում, բացի 2-րդից և 3-րդից, գոյություն ունեն նշանակալի տարբերություններ ($U = 0, p < 0.05$):

Կետելի անձնային հարցարանի արդյունքների հիման վրա կազմված պրոֆիլները (1-4 խմբեր)

Գծանկար 3



Q1 (ռիզիկոսություն, պահպանողականություն – ճկունություն, նորի հակում) գործոնի պարագայում նշանակալի տարբերություն գոյություն ունի 3-րդ և 4-րդ խմբերի միջև ($U=0, p<0.05$), ինչպես նաև՝ 2-րդի և 1-ինի միջև ($U=0, p<0.05$):

Q4 (թուլացվածություն, ցածր մոտիվացիա – լարվածություն) գործոնի պարագայում նշանակալի տարբերություններ կան 1-ին և 4-րդ, ինչպես նաև 2-րդ և 3-րդ խմբերի միջև ($U=0$, $p<0.05$):

M (գործնականություն – երազկոտություն) գործոնի պարագայում տարբերություն գոյություն ունի միայն 2-րդ և 1-ին խմբերի միջև ($U=0$, $p<0.05$):

Ատացված արդյունքները առավել ակնառու դարձնելու համար կազմել ենք ստորև ներկայացված աղյուսակը ((-) ցածր, (+) բարձր, (0) միջին ցուցանիշները արդյունքների պայմանական նշաններն են):

Աղյուսակ 2

| խումբ | վարքի արդյունքների ճանաչում | վարքի դասի ճանաչում | Գործոններ |
|-------|-----------------------------|---------------------|---------------------|
| 4 | 0 | - | $A^+ Q1^- Q4^+$ |
| 1 | - | + | $A^+ Q1^- Q4^- M^+$ |
| 2 | + | - | $A^- Q1^+ Q4^+ M^-$ |
| 3 | + | 0 | $A^- Q1^+ Q4^-$ |

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալների վերլուծությունից առաջին հերթին պարզ է դառնում, որ վարքի արդյունքների ճանաչման բարձր ցուցանիշներ ունեցող անձանց հատուկ են ինքնամոտիվությունը, քչախոսությունը և բժախնդրությունը. նրանք ունեն բազմապիսի հետաքրքրություններ, մասնավորապես՝ ինտելեկտուալ, սիրում են շատ տեղեկություններ ստանալ, սակայն ոչինչ «կուրորեն» չեն ընդունում:

Վարքի արդյունքների ճանաչման ցածր և միջին ցուցանիշներ ունեցող անձանց բնորոշ են համագործակցության պատրաստակամությունը, մարդկանց հանդեպ ուշադիր, հոգատար լինելու հակվածությունը, կենսուրախությունը, հաճույքով հաղորդակցվելը: Միևնույն ժամանակ նրանց հատուկ է ռիզիկոսությունը և պահպանողականությունը:

Այնուհետև, երբ մենք դիտարկեցինք վարքի դասերի ճանաչման կարողությունը, պարզվեց, որ վերջինիս ցածր լինելու պարագայում հետազոտության մասնակիցների մեջ առկա է ընդգծված լարվածություն, որը բնորոշվում է անբավարարվածությամբ, ֆրուստրացիայով և հուզական անկայունությամբ: Դրան հակառակ՝ բարձր և միջին ցուցանիշներ ունեցողներին հատուկ է թուլացվածություն և ցածր մոտիվացիա:

Մեր կարծիքով այս փաստերը կարելի է բացատրել նրանով, որ հաղորդակցման այն սուբյեկտները, որոնք առավել հաջողությամբ են կարողանում կանխատեսել դեպքերի հնարավոր զարգացումները (վարքի արդյունքների ճանաչում), ունեն այն հատկությունները, որոնց ձևավորումը տեղի է ունենում սոցիալական հիմնական պահանջումների մշտական ֆրուստրացիայի ազդեցության տակ, որի հետևանքով նրանց մոտ ձևավորվում են ինտրավերտներին հատուկ բնութագրեր: Զրույցի ընթացքում զրուցակցի ոչ խոսքային վարքի մշտապես հսկումը, էքսպրեսիվ վարքի մշտական դիտարկումը և վերլուծությունը հանգեցնում են սոցիալական ընկալման կարողությունների զարգացման, դառնում վարքի վերլու-

ծության և մեկնաբանման, ինչպես նաև զգայագրոգման (սեմզետիվություն) ձևավորման պայման:

Ամփոփելով, կարելի է ասել, որ առաջ քաշված վարկածը հաստատվել է. վարքի արդյունքների և դասերի ճանաչման կարողությունների մակարդակը պայմանավորված է անձնային որոշակի բնութագրերով:

АГАСИ АРАКЕЛЯН – Особенности взаимосвязи социального интеллекта и личностных характеристик сотрудников правоохранительных органов. – Личностные характеристики сотрудника правоохранительных органов напрямую связаны с его социальным интеллектом, и в статье раскрываются особенности этой взаимосвязи. Обосновывается различие между элементами социального интеллекта – способностью познавать результаты и классы поведения. Эксперименты показали, что между некоторыми личностными характеристиками имеются статистически значимые различия, которые зависят от соотношения уровня познания результатов и классов поведения.

AGHASI ARAKELYAN – The Peculiarities of Correlation of Social Intelligence and Personality Characteristics of Law-Enforcement Authorities. – The article reveals the correlation peculiarities of social intelligence and personality characteristics of the employees of Law-enforcement structures. The difference between the elements of social intelligence – the ability to perceive the behavior results and classes is substantiated. The experimental research discovers that there are statistically significant differences between some personality characteristics depending on the correlation of the cognition level of the behavior results and classes.